

# Աշխատանքային օրենսդրության փոփոխություններ/ Մինչև տասնութ տարեկան աշխատողների աշխատանքային գործունեությանը վերաբերող կարգավորումներ:

**Կոնտակտային անձինք**

**Սերգի Կոբախիձե**
Գործընկեր
Հարկային և իրավաբանական բաժին
sergi.kobakhidze@pwc.com

**Ալլա Հախնազարյան**
Իրավաբանական պրակտիկայի ղեկավար
Հարկային և իրավաբանական բաժին
alla.hakhnazaryan@pwc.com

**Սերգեյ Սարուխանյան**
Ավագ Խորհրդատու
Հարկային և իրավաբանական բաժին
sergey.sarukhanyan@pwc.com

Ավելի մանրամասն տեղեկատվության համար խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Աշխատանքային օրենսգրքում (այսուհետ՝ «Օրենսգիրք») 03 մայիսի 2023 թվականին ընդունված փոփոխություններով հստակեցվել են մինչև տասնութ տարեկան աշխատողների աշխատանքային գործունեությունը կարգավորող դրույթները:

Նախկինում գործող կարգավորումներով Օրենսգիրքը սահմանել էր, որ մինչև տասնութ տարեկան աշխատողները (i) պետք է ներգրավվեն միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում, (ii) պետք է ենթարկվեն պարբերական բժշկական զննության (iii) պետք է աշխատեն Օրենսգրքով սահմանված տևողության սահմաններում:

Մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքի վերաբերյալ կարելի է առանձնացնել երեք հիմնական փոփոխություն.

1) Օրենսգրքի 257-րդ հոդվածում սահմանվել են այն աշխատանքների շրջանակը, որոնցում արգելվում է ներգրավել մինչև տասնութ տարեկան անձանց: Այդ աշխատանքներից են ծխախոտի, ալկոհոլային խմիչքների, մոլեխաղերի գովազդը, առևտուրը կամ ցանկացած այլ եղանակով տարածումը:

2) Օրենսգրքի 249-րդ հոդվածում սահմանվել է այն հաճախականությունը, որի ընթացքում մինչև տասնութ տարեկան աշխատողները պետք է անցնեն պարբերական բժշկական զննություն՝ յուրաքանչյուր աշխատանքային տարվա ընթացքում մեկ անգամ:

3) Օրենսգրքի 140-րդ հոդվածում տեղի են ունեցել մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքի տևողության որոշ փոփոխություններ, ինչպես նաև սահմանվել է, որ մինչև տասնութ տարեկան բոլոր անձինք կարող են ներգրավվել աշխատանքի միայն պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս:

Հարց է առաջանում, թե ու՞մ հաշվին և ե՞րբ է կատարվում բժշկական զննությունը:

Օրենսգրքի վերոնշյալ փոփոխությունները ուժի մեջ են մտել 31.07.2023 թվականին:

© 2023 PwC. Բոլոր իրավունքները պահպանված են.



# Amendments to Labour Legislation/ Regulations regarding the labor relations of employees under the age of eighteen.

**Contacts**

**Sergi Kobaghidze**
Partner
Tax, Legal and People Services
sergi.kobakhidze@pwc.com

**Alla Hakhnazaryan**
Head of Legal Practice
Tax, Legal and People Services
alla.hakhnazaryan@pwc.com

**Sergey Sarukhanyan**
Senior Associate
Tax, Legal and People Services
sergey.sarukhanyan@pwc.com

If you are interested in additional information, please contact us.

As per the amendments adopted on 03 May 2023, to the Labor Code of the Republic of Armenia (RA) (henceforth referred to as "the Code") the provisions regulating the labor relations of employees under the age of eighteen have been clarified.

Previously, the Code stipulated that employees under the age of eighteen (i) shall be engaged in temporary employment that does not jeopardize their well-being, safety, education, or ethical values, (ii) shall undergo regular medical check-ups (iii) shall work within the timeframe specified by the Code.

Three main amendments can be distinguished regarding the work of individuals under the age of eighteen:

1) Article 257 of the Code defines the types of works where it is forbidden to engage individuals under the age of eighteen. This category of work encompasses such tasks as promoting cigarettes, alcoholic beverages, gambling, or engaging in trade or distribution of such products.

2) Article 249 of the Code defines the frequency during which employees under the age of eighteen shall undergo a periodical medical examination - once in each working year.

3) Article 140 of the Code has undergone changes related to the work duration for individuals under the age of eighteen, along with the stipulation that they can only be employed outside the hours designated for compulsory education.

A question arises about who bears the cost and when are the medical check-ups conducted?

The above-mentioned amendment of the Code entered into force on 31.07.2023.

© 2023 PwC. All rights reserved.